



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



*Ա. ՄԻՆԱՍՅԱՆ*  
Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«07» 02 2017 թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 10

**Ձեռնարկողը՝**

**<<Օբսիդիան Սթոն>> ՍՊԸ**

**Գործունեությունը՝**

**Արագածավանի օբսիդիանի հանքերևակման  
<<Վանակար>> տեղամասում երկրաբանական  
ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայտ  
<< Արագածոտնի մարզ**

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ  
տնօրեն՝**



**Վ. Սահակյան**

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 10

<07> 02 2017թ.

*Արագածոտնի մարզի Արագածավանի օբսիդիանի երևակման <<Վանակատ>> տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր*  
*Մ. Գևորգյան*  
*09.02.2017թ.*

**<< Արագածոտնի մարզի Արագածավանի օբսիդիանի երևակման <<Վանակատ>> տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր**

Ձեռնարկող՝ <<Օբսիդիան Սթոն>> ՍՊԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայր /Գ կատեգորիա/  
Գտնվելու վայրը՝ << Արագածոտնի մարզ, Արագածավան համայնք

<<Օբսիդիան Սթոն>> ՍՊ ընկերության նախաձեռնությամբ մշակվել է << Արագածոտնի մարզի Արագածավանի օբսիդիանի երևակման <<Վանակատ>> տեղամասում երկրաբանական ուսումնասիրության իրականացման սույն ծրագիրը: Երևակումը ներկայացված է 1 տեղամասով և զբաղեցնում է մոտ 5.8 հա տարածք:

Ծրագրի կազմման նպատակն է ընկերության կողմից հայցվող տարածքի վրա կատարել համալիր երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ ուղեկցելով դրանք մակերևույթային լեռնային փորվածքների անցման, մինչ 15մ խորությամբ հորատանցքերի հորատման և բացահանքերի անցման աշխատանքներով: Տեղամասի օբսիդիանների որակական հատկանիշները պետք է բավարարեն 41.117-76 ՕՇԻ-ի տեխնիկական պահանջներին՝ որպես հումք արհեստագործական, ոսկերչական, արդյունաբերական, դեկորատիվ քարի արտադրության համար: Արդյունահանման թափոնները պետք է ուսումնասիրվեն՝ որպես հղկիչ և կապակցող նյութի օգտագործման հնարավորությունը պարզելու համար: Նախագծված աշխատանքների իրականացումը հնարավորություն կտա օգտակար հանածոյի որակական, քանակական գնահատականը և պաշարները հաշվարկել Ը կարգով:

<< Արագածոտնի մարզի Արագածավանի օբսիդիանի երևակման <<Վանակատ>> տեղամասը վարչական առումով գտնվում է Արագածավան համայնքում, գյուղից 4.2-4.5կմ դեպի հյուսիս-արևելք: Տեղամասն ընկած է Արագածի հրաբխային զանգվածի սարավանդային մասում, աչքի է ընկնում բլրային ռելիեֆով: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝

- հյուսիսային լայնություն՝ 40° 20' 02"
- արևելյան երկարություն՝ 43° 42' 61"

Ելնելով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքից, օգտակար հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևից և չափերից, հետախուզական աշխատանքներն



իրականացվելու են հորատանցքերի, հետախուզահորերի և փորձնական բացահանքի միջոցով, մերկացումներով և նմուշարկման զուգորդությամբ:

Ուսումնասիրվող տարածքում օբսիդիանների առկայության ճշտման և գնահատման համար կատարվելու է 1:1000 մասշտաբի երկրաբանահանույթային աշխատանքներ և կազմվելու է երկրաբանական քարտեզ: Եզրագծված տեղամասում աշխատանքների համար նախատեսվում է կատարել մոտ 3կմ երկարությամբ որոնողական երթուղիներ:

Օբսիդիանների մարմինների մորֆոլոգիան պարզելու և օգտակար հանածոի մարմնի ներքին կառուցվածքի ուսումնասիրության և նմուշարկման նպատակով նախատեսվում է վերգետնյա 2 լեռնային փորվածքների և 4 հետախուզաառուների անցում: Վերգետնյա լեռնային փորվածքներն իրականացվելու են առանց պայթեցման աշխատանքների՝ էքսկավատորի օգնությամբ:

Մինչև լեռնային փորվածքների իրականացումը նախատեսվում է կատարել բուսաշերտի հեռացում և պահեստավորում՝ հետագա օգտագործման նպատակով: Հետախուզահորերը նախատեսված են 3մ խորությամբ, ընդհանուր՝ 12գծ.մ: Հետախուզաառուների խորությունը նախատեսված է ընդունել 1.5մ, լայնությունը՝ 0.8մ,, Ընդհանուր՝ 50գծ.մ. երկարությամբ իրականացման դեպքում աշխատանքների ծավալը կկազմի 80մ<sup>3</sup>:

Տեղամասում հանքային գոտիները հետախուզելու նպատակով նախատեսվում է հորատել 8 հորատանցք՝ 140.0մ ընդհանուր ծավալով, 15-20մ խորությամբ: Այդ աշխատանքներն իրականացվելու են VI կարգի ամրության ապարներում՝ կավային կամ պոլիմերային լուծույթների օգտագործմամբ: Ըստ նախնական տվյալների հորատման աշխատանքների ծավալները բաշխվում են հետևյալ կերպ.

- Ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ առաջացումներ - IV կարգ (24.5 գծ.մ):
- պերլիտներ և օբսիդիաններ -VI -IX կարգ (115.5 մ)

Հորատումը կատարվելու է УРБ-2.5А հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով: Քանի որ տեղամասում առկա են տարատեսակ օբսիդիաններ նախատեսվում է անցնել փորձնական 3 բացահանք՝ ընդհանուր 300մ<sup>3</sup> ծավալով:

Հորատման աշխատանքների ժամանակ հիմնականում կօգտագործվեն գոյություն ունեցող ճանապարհները՝ դրանք նորոգելով: Հորատման հարթակներին մոտեցման համար նախատեսվում է կառուցել մոտ 0.5կմ երկարությամբ ճանապարհներ: Այդ աշխատանքներն ընդհանուր 1590մ<sup>3</sup> ծավալով իրականացվելու են մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների, քիմիական և միներոլոգիական ուսումնասիրությունների նպատակով հետախուզահորերից, մերկացումներից և փորձնական բացահանքից նմուշարկումը կատարվի ակոսային եղանակով: Վերցված նմուշները կուսումնասիրվեն մասնագիտացված լաբորատորիաներում:

Նախնական գնահատման հայտում ներկայացվել է ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա /հող, ջուր օդ,



կենսաբազմազանություն/ հնարավոր ազդեցությունները և որոշվել է վերջիններիս վնասակարության աստիճանը: Հայտում մշակվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր, որոնք ուղղված են նախատեսվող աշխատանքների ժամանակ հնարավոր ծխագազերի և անօրգանական փոշու արտանետումների նվազեցմանը, վառելիքի և նավթամթերքների հնարավոր արտահոսքերի կանխմանը, հողային ռեսուրսները և շրջակա տարածքները աղտոտումից զերծ պահելուն: Հողային ռեսուրսների աղտոտումը կանխելու նպատակով նախատեսվում է տարեկան երկու անգամ իրականացնել հողերի նմուշառում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախատեսվել են միջոցառումներ: Պահպանության ենթակա բուսաշերտի ծավալը, որը 406մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսում, 0.25մ հզորությամբ գնահատվել է 101.5մ<sup>3</sup>, պահեստավորվելու է այդ նպատակի համար նախատեսված վայրում՝ հետագայում հետախուզական աշխատանքների ավարտից հետո վերագետնյա փորվածքների և հորատման հարթակների խախտված տարածքներում վերականգնման նպատակով օգտագործելու համար: Հողաբուսածածկի շերտով տարածքների վերականգնման աշխատանքները կատարվելու են ձեռքով՝ III-րդ կարգի գրունտներում: Ռեկուլտիվացիայի իրականացման համար նախատեսվող ծախսերը գնահատվել են 152.205 ՀՀ դրամ: Տարածքների վերականգնման աշխատանքները ներառում են նաև տվյալ տարածքին բնորոշ բուսատեսակներով ցանքս, կամ ճմապատում, ինչի իրականացման պարագայում բարձրացնում է հողի հակաէրոզիոն հատկությունները:

Ուսումնասիրության շխատանքների իրականացման ժամանակացույցը նախատեսվել է 3 տարի: Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում 26.01.2017թ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում անցկացվել է հանրային քննարկումներ: Քննարկումների ժամանակ ծրագրի իրականացումը հանրության կողմից արժանացել է հավանության:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Օբսիդիան Սթոն>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի օբսիդիանի երևակման <<Վանակատ>> տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Գլխավոր մասնագետ՝



Հ. Մկրտչյան